ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2651-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2025թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ հաշվից /բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / փոխանցել 100.000 դրամ՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն / հ/հ՝ 163075481800 /՝ որպես Սևան համայնքի բնակիչ Ասյա Անդրանիկի Հովակիմյանի բուժման ծախսի փոխհատուցում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2652-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Շուշան Վարդանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը, պարզեցի. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ ՔՏՄ 118.9/8404-25 գրության պահանջներին համապատասխան ծանուցագրեր են ուղարկվել քաղ. Շուշան Վարդանյանին՝ Սևանի համայնքապետարան ներկայանալու և բացատրություններ տալու համար: 2025թ. մարտի 21-ին ՀՀ ՇՄՆ նախարարության էկոպարեկային ծառայության N50 արձանագրության համաձայն՝ «Երիտասարդական» կոչվող հանգստյան գոտում տեղադրված է 3x9 մետր չափերով մետաղական տնակ: Ենթադրվում է, որ տնակը տեղադրվել է ինքնակամ և անհրաժեշտ է այն ապամոնտաժել: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 3x9 մետր չափերով մետաղական տնակը պատկանում է Սևան համայնք, գյուղ Լճաշեն, 10-րդ փողոց, տուն 16 հասցեի բնակիչ Վազգեն Թադևոսյանին: Քանի որ քաղաքացին ապամոնտաժել է տնակը, առկա է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնի N Գ/01-88-ԿՃ որոշումը վարույթը կարճելու մասին, ուստի Վազգեն Թադևոսյանի նկատմամբ վարչական վարույթը կարճվում է ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 247 հոդվածի պահանջներով՝ այն է վարչական դեպքի բացակայությունը: Ինչ վերաբերվում է քաղաքացի Շուշան Վարդանյանին վարձակալությամբ պատկանող հողատարածքում 3x9 մետր չափերով մետաղական տնակին, ապա քաղաքացի Շուշան Վարդանյանի կողմից խախտվել է ՀՀ Կառավարության 2001թ. սեպտեմբերի 24-ի N896-Ն որոշման պահանջները՝ առանց տեղադրման թույլտվության տարածքում տեղադրվել է ոչ հիմնական շինություն: Հողատարածքը հանդիսանում է պետական սեփականության, բնության հատուկ պահպանվող տարածք և ենթակա է ապամոնտաժման:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, **որոշում եմ՝**

1. Պահանջել քաղաքացի Շուշան Վարդանյանից /ք. Երևան, Աղբյուր Սերոբի փողոց թիվ 36 տուն հասցե/ ապամոնտաժելու հողատարածքում գտնվող մետաղական ոչ հիմնական շինությունը:
2. Պահանջել Շուշան Վարդանյանից տարածքի կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2653-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԷԴԳԱՐ ՎԱՉԱԳԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Էդգար Մխիթարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի՝ հեղուկացված ածխաջրածնային գազալցակայանի օրինականության փաստով նյութերը, պարզեցի. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ ՔՏՄ /18.1/27350.25 08.10.2025թվականի գրությամբ տեղեկացվել է՝ 24. 09. 2025թ. Nh/1031-2025-Ա հանձնարարականի Գեղարքունիքի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից իրականացված՝ Սևան համայնք, գյուղ Չկալովկա, 10-րդ փողոց թիվ 23 բենզալցակայանում ուսումնասիրության վերաբերյալ: Դրա արդյունքում ենթադրվել է, որ «ՖԵՆԿԱ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող հեղուկային լցակայանը չունի օրինականության վերաբերյալ փաստաթղթեր: Հիմք ընդունելով գրության պահանջը՝ «ՖԵՆԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանը բանավոր հարցմամբ ներկայացել է Սևանի համայնքապետարան՝ գազալցակայանի գործելու հետ կապված 18թերթ փաստաթղթով՝ գազալցակայանի օրինականության գործունեության փաստն ապացուցելու նպատակով: Սևանի համայնքապետարան են ներկայացվել արտադրական վտանգավոր օբյեկտի փորձաքննության N 288 եզրակացությունը, արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության եզրակացությունը՝ N288.1, անվտանգության վկայագրի փորձաքննության պայմանագիրը՝ N 271, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականները՝ N8/1-22272 և N8/1-22087, տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունը՝ N288.2, տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունը՝ N 271.1, «ՀԱՅԱՆՏԱՌ» գլխավոր տնօրենի՝ 07.02. 97թ. N08/05-03 գրությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի՝ 16 հոկտեմբերի 1997թ. N 119 որոշումը և այլ փաստաթղթեր: Բազմաթիվ հանգամանքների ուսումնասիրման նպատակով, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված վարչական վարույթի ժամկետները չխախտելու համար «ՖԵՆԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանի նկատմամբ վարչական վարույթը կասեցվել է Սևան համայնքի ղեկավարի՝ 25.11.2025թ. թիվ 2510-Ա որոշմամբ: ՍՊԸ-ի տնօրենը 05.12.2025թ. Սևանի համայնքապետարան է ներկայացրել դիմում-պարզաբանում, որտեղ փաստում է, որ գազի մետաղական տարողությունը տարածքում եղել է մինչև իր կողմից առքուվաճառքի գործարք կնքելը, միաժամանակ տնօրենը խնդրել է այդ փաստերի հիման վրա իրեն ազատել վարչական պատասխանատվությունից: ՍՊԸ-ի տնօրենին՝ 05.12.2025թ. ուղարկվել է ծանուցում 2025թվականի դեկտեմբերի 12-ին վարչական գործի քննության օր նշանակելու մասին: Իսկ Սևանի համայնքապետարանի տեղազննող հանձնախումբը 08.12.2025թ. ուսումնասիրել է գազի մետաղական տարողության տեղադրման օրինականության

փաստերը: Հանձնախումբը արձանագրել է, որ գազի լիցքավորման տարողությունը, խողովակային հանգույցի մոնտաժային աշխատանքները, գազի լիցքավորման սարքավորումը տեղադրվել են ինքնակամ: Լրացուցիչ՝ 12.12.2025թ.՝ ՍՊԸ-ի տնօրենը վարչական գործի քննության ժամանակ պարզաբանել է, որ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը 2025թվականի հոկտեմբերի 1-ին և 2-ին իրականացրել է տեսչական ստուգում, փաստել է, որ տեղում առկա են գազի մետաղական տարողություն, ինչպես նաև հեղուկ վառելիքի տարողություններ: 2025թվականի հոկտեմբերի 22-ին վարչական տուգանք է նշանակել ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանի նկատմամբ հակահրդեհային կանոնները խախտելու համար: Փաստորեն, ըստ տնօրենի, տարածքում առկա մետաղական տարողությունն օրինական է եղել տեղադրված: Հաշվի առնելով վերոշարադրվածը, հիմք ընդունելով տեղազննող հանձնախմբի եզրակացությունը՝ փաստում ենք, որ ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանը խախտել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի, ՀՀ կառավարության՝ 2015թ. մարտի 19-ի 596-Ն որոշման պահանջները: Միաժամանակ փաստում ենք, որ «ՖԵՆԿԱ» ՍՊԸ-ի զբաղեցրած հողատարածքը հանդիսանում է պետական սեփականության բնության հատուկ պահպանվող տարածք: Լրացուցիչ փաստվում է, որ ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայությունը միայն 10.12.2025թ. արձանագրություն է ներկայացրել Սևանի համայնքապետարան: Որպես խախտում արձանագրվել է՝ բենզալցակայանի հետնամասում հայտնաբերված փոսորակի փորման դեպք՝ 10x2 մետր չափերով, որտեղ տեղադրվել է մետաղական տարողությունը: ՍՊԸ-ի տնօրենի գործողությունները համապատասխանում են ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի հատկանիշներին և հանդիսանում են ինքնակամ արարքի շարունակում վարչական տույժ նշանակելուց հետո: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի , ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. «ՖԵՆԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով:
2. Պահանջել ՍՊԸ-ի տնօրենից՝ ապամոնտաժել գազի մետաղական տարողությունը, մոնտաժային հանգույցը և տարածքը բերել նախկին տեսքի:
3. Պահանջել ՍՊԸ-ի տնօրենից՝ տարածքի կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան 2 ամսվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2654-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 18. 05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՌԴ քաղաքացի Սուսաննա Հովհաննիսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 74 հասցեում գտնվող 1000քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Սուսաննա Պողոսի Հովհաննիսյանին /ծնված՝ 18.11.1962թ./ պատկանող, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 74 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման համար 1000քմ մակերեսով հողատարածքին կից՝ 200քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Սուսաննա Հովհաննիսյանի սեփական գույքը:
2. Սուսաննա Հովհաննիսյանին պատկանող 1200քմ մակերեսով հողատարածքում 1972թ. կառուցված 33. 63քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 13. 68քմ/, 133. 32քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 93. 93քմ/, 36. 17քմ մակերեսով օժանդակ շինությունը /ներքին մակերեսը՝ 27. 92քմ/, 25. 10քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 20. 97քմ/, 14. 44քմ մակերեսով աստիճանահարթակը, 3. 70քմ մակերեսով պարսպը ճանաչել օրինական՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 88 բնակելի տուն հասցե:
3. Սուսաննա Հովհաննիսյանին պատկանող Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 88 հասցեում գտնվող 1200քմ մակերեսով հողատարածքում 2008թ. կառուցված 14. 60քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնակամ շինություն:

4. Սուսաննա Պողոսի Հովհաննիսյանին պատկանող Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 88 հասցեում գտնվող 1200քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 385.8քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 88 / 1 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով՝ հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 866.25դրամ/ օտարել Սուսաննա Հովհաննիսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2655-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0292-0002 կադաստրային ծածկագրով, Սևան համայնք, Գեղամավան գյուղում գտնվող, 2.36216հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2656-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. 2387-Ն, 04.12.2008թ. N 1423-Ն որոշումներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Ծաղկունք բնակավայրի գլխավոր հատակագիծը և քաղ. Սոս Մինասյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծաղկունք հասցեում գտնվող 0.18216հա մակերեսներով հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծաղկունք հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.18216հա մակերեսով հողատեսքի /կադաստրային ծածկագիր՝ 05-047-0121-0024/ նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Ծաղկունք բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության:
2. 0.18216հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծաղկունք, 1-ին փողոց թիվ 46 հողամաս հասցե:
3. Սոս Սասունի Մինասյանին՝ Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվհամարին վճարել հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 918177.48 դրամ:
4. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2657-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արայիկ Առաքելյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի / կադաստրային ծածկագիր 05-086-006-016/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 12-րդ փողոց թիվ 76 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2658-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Գնել Մանուկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 5 / 22 և Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 5 / 20 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորելու /վկայականներ՝ 21062023-05-0023 և 30052023-05-0008/, միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 5 / 22 և Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 5 / 20 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել և անշարժ գույքին տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 5 / 20 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2659-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Հարությունյանի լիազոր անձ «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Ռոմանոս Պետրոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 5 հասցեում «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին պատկանող տարածքի 0.4կՎ էլեկտրամատակարարման աշխատանքներ կատարելու համար :
2. «ՀԷՑ» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՀԷՑ» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2660-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6 դաս 1, հոդված 4823 / վճարել պետական տուրքի գումար՝ 28.960 դրամ ՝ Սևանի համայնքապետարանն ընդդեմ Արմեն Մնացականյանի հայցի դիմաց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2661-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ, ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն, 02.02.2002թ. թիվ 88 որոշումներով, հաշվի առնելով, որ Սևան համայնքի, Ծաղկունք բնակավայրի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ համատեղ սեփականության իրավունքով քաղ. Էրնեստ Կարապետյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծաղկունք, 2-րդ փողոց թիվ 35 հասցեում գտնվող հողամասում / վկայական՝ N 1529256, տրված 20.06.2009թ./ գտնվող շինությունների մակերեսները, գծային չափերը, երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները, **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծաղկունք, 2-րդ փողոց թիվ 35 հասցեում գտնվող, 05-047-016-005 կադաստրային ծածկագով հողամասում գտնվող շինությունների մակերեսները, գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող ավտոտնակի գործառական նշանակությունը փոխել՝ բնակելի տան:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2662-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ադիբեկ Հայրումյանի դիմումը՝ կառուցապատման իրավունքով իրեն պատկանող, Լճաշեն-Չկալովկա հատված, Սևանի ասֆալտբետոնի հարևանությամբ հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ 2449238, տրված՝ 11.12.2007թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Լճաշեն-Չկալովկա հատված, Սևանի ասֆալտբետոնի հարևանությամբ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 28-րդ փողոց թիվ 10 / 1 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2663-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 25.11.2025Թ. N2510-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 25.11.2025թ. ««Ֆենկա» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին» N2510-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «Էդգար Մխիթարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը» բառերից հետո կարդալ «կապված գազի մետաղական տարողության տեղադրման օրինականության վերաբերյալ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2664-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 02.02.2002թ. թիվ 88 որոշումով և հիմք ընդունելով քաղ. Վիկտոր Գրիգորյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Խաղաղության փողոց թիվ 4 / 40 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակություն ունեցող 0.014945հա մակերեսով հողատարածքի /վկայական՝ 25102018-05-0020/ գործառնական նշանակությունը փոփոխելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Խաղաղության փողոց թիվ 4 / 40 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի 0.014945հա մակերեսով հողամասի /վկայական՝ 25102018-05-0020/ գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման հողամասի:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2665-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-040-0251-0064 կադաստրային ծածկագրով, Սևան համայնք, Լճաշեն գյուղում գտնվող, 6.50000հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2666-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-040-0251-0001 կադաստրային ծածկագրով, Սևան համայնք, Լճաշեն գյուղում գտնվող, 1.80456հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2667-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 6.86287հա մակերեսով, Սևան համայնք, Լճաշեն գյուղում գտնվող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, Ավազի հանքի փողոց թիվ 4 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2668-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00447հա մակերեսով, Սևան համայնք, Սևան քաղաքում գտնվող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 13 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2669-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00199հա մակերեսով, Սևան համայնք, Սևան քաղաքում գտնվող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Հ. Բաբաջանյան փողոց թիվ 1 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2670-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21. 11.2025Թ. N 2464-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 21.11.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 2464-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «0.00950հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.01141հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2671-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով «ԳԵՎՄԻԿ» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող «ԳԵՎՄԻԿ» ՍՊԸ-ի կողմից՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, Գեղամավան-Գագարին խճուղի թիվ 6 հասցեում գտնվող հողատարածքում կառուցված ջերմատան շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2672-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն և 26. 05. 2016թ. 550-Ն որոշումներով, հիմք ընդունելով քաղ. Դիանա Բոյաջյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 43 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ N 25052018-05-0013/ զբաղեցրած 0. 082հա մակերեսով անշարժ գույքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 43 / 1 հասցեում գտնվող 0. 082հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 43 / 2 հասցեում գտնվող 0. 07923հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 11122025-05-0010/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 1877. 5դրամ վճարելու պայմանով օտարել Դիանա Սամվելի Բոյաջյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2673-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00751հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 12 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2674-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 13.11.2025Թ. N 2405-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 13.11.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 2405-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.16000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Բարեկամության փողոց թիվ 2 / 1 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2675-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12. 04. 2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով քաղ. Տարոն Մինասյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող 0.16748հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 20012023-05-0034/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով Տարոն Մինասյանին պատկանող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.16748հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Տարոն Կարոյի Մինասյանին՝ հողի կադաստրային արժեքը 18004.1 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2676-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ապակեմեկուսիչ» ԲԲԸ-ի տնօրեն Էդուարդ Սահակյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքը / վկայական՝ 09102025-05-0055/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 5 հասցեում գտնվող 13.37353հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր՝ 0.24914հա մակերեսով անշարժ գուքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ձկնորսների փողոց թիվ 2 / 1 արտադրամաս հասցե;
2) երկրորդ միավոր՝ 13.12352հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 5 / 1 վարչական շենք հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2677-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 15. 09.2025Թ. Ն 1902-Ա ՈՐՈՇՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37 -րդ հոդվածի պահանջները՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 15.09.2025թ. «Թույլտվություն տրամադրելու մասին» 1902-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2678-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Նելլի Շխոյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Նելլի Շխոյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 45շ., 1-1 հասցե / տրամադրել 2025թ. 1-ին, 2-րդ , 3-րդ և 4-րդ եռամսյակների համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100 դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 2679-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Ռիփսիկ Մինասյան» ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Ռիփսիկ Մինասյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Գրիբոյեդով փողոց թիվ 9 / 38 հասցե / տրամադրել 2025թ. 4-րդ եռամսյակի համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100դրամ;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 16
ք.Սևան